



100

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆԻՆ

ՎԻՏԱՅԻ

ԵՐԳԻ ՎԵՑԵԱԿ







85

ՎԻՏԱՆՅԻ

467

# ՎՐԻՍՏՈՍԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Հ. ԵՂԻՍՎ. Վ. ԹՈՄԱՃԱՆ

Ի ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Ի ԽՆԴԻՈՅ

ՊԱՄՈՆ ՊՕՂՈՍԻ ԼԱԶԱՐՈՎԻԶ

62




1281  
551  
-----  
1832

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ԶԱԶԱՐ

Ռ Մ Ձ Ա



1824

THE UNIVERSITY OF

YALE

LIBRARY

OF THE

YALE UNIVERSITY

LIBRARY



52

YALE UNIVERSITY

LIBRARY

OF THE

YALE UNIVERSITY



ԱՌ

ՔԱՋԱՓԱՅԼ ԱՍՊԵՏՍ

ՅԱՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԻԳՈՐ

ԱԲԳԱՐԵԱՆ

ԵՒ ԱՌ

ԱՂԱԲԵԳԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ

Ի ԿԱԼԿԱԹԱ

ՆՈՒԷՐ

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԵԾԱՐԱՆԱՅ

ԸՆԾԱՅԷ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԼԱԶԱՐՈՎԻՉ



## Ա Ձ Դ

Օ՛րս անպատիր տեսութիւն կրն-  
 քեցին Բանասերք, եթէ զգեղեցիկն  
 յաշխոյժս մտաց զԲանաստեղծու-  
 թիւն, ձօնել արժան է կամ Աս-  
 տուծոյ, կամ Աստուածայնոցն, ըզ-  
 նոյն արդեամբք արձանացոյց Ախտա  
 առաջին 'ի Քրիստոսնեայս' իբրու Ռի-  
 ցազներդակ Բանաստեղծ :

Ճնաւ համբաւատենչ այս Քեր-  
 թող Մարկոս Հերոնիմոս՝ մականուա  
 նեալն Ախտա Եպիսկոպոս Ալբիոյ,  
 'ի վեշտասաներորդ դարու՝ 'ի Ք.Յ.  
 մենա քաղաք Իտալիոյ 'ի հոյակապ  
 և յածասեր ծնողաց :

Անդամին յանտիական տիոցն  
 ստուերադրեաց նա յանձին զքան  
 Իմաստնոցն, իսկ ապա յաճել հասա-

կին՝ տիրապէս և ճշգրտեցոյց, զայն՝  
Եթէ ,, Մանուկ էի մտաւարժ , և  
ողւոյ բարւոյ գիպեցայ ,, :

՚ի տիս հասեալ պատանեկու-  
թեան , ուրացեալ զանձն և զհայրե-  
նի տունն , զհեա ընթացաւ խաչին  
Վրիտաոսի , կրօնաւորեալ ՚ի ըռծ  
խոնարհութեան կանոնաւոր կարգի  
սրբոյն Աւգոստինոսի :

Չիմաստասիրականն կատարեալ  
զվարժան , առաքեցաւ ՚ի Պաղատիոն ,  
պատկել անդանօր և զԱստուածա-  
բանականն . ապա յուղի անկեալ  
չոքաւ ՚ի Բոնոնիա , ուր և տքնարար  
պատկառ եկաց աստուածայնոցն  
Դպրութեանց և Քերթողական վար-  
ժից . յորս և անդէն յետ քահա-  
նայական ձեռնադրութեանն՝ այն-  
պէս իմն գերազանցեալ գտաւ , ըն-  
ծայեալ ՚ի լոյս ինչ ինչ քերթողա-  
կան շարագրածս ՚ի Ղաափն , որպէս  
զի և զհամբաւի հարեալ յընդհա-  
նուրս , սքանչելի եղև նա առաջի ար-  
քայից և իշխանաց , և մինչև յակն

տիկ զերաց 'ի Հռովմ, առաջի մեծի  
խնայտասեր Քահանայապետին Ղև-  
տնդիտաի . Ժ . այն՝ որ ըստ քաջ ա-  
խորժակացն նորաստեղծիչ եղև զե-  
ղեցիկ Գաբուժեանցն յԵւրոպա :

Չեռնամուխ եղեալ նորա յայս  
Դիւցազնական Գերթուած Քրիս-  
տոսականին , և չև ևս բոլորեալ ,  
գէպ եղև Քահանայապետիս այսմիկ  
վերծանել ինչ ինչ 'ի նորայոցն , և  
հիացեալ բացագանչէր . « Տեղի տուք  
այսուհետև Հռովմայեցիք , տեղի  
տուք և հելլենք . Հիացեալ եմ ,  
զի՛նչ վեհ ևս քան զԿնէականն Վիր-  
գիլեայ՝ ծնանի աւագիկ աշխարհի » :

Գրեաց նա՝ և բազում ինչ այլ  
Նուագս քերթողականս հրաշալիս .  
և զերիս ևս Գիրս յաղագս Բանառ  
տեղծական արուեստի . զորս Աքա-  
լիճեր գերագոյն գասեաց քան զՈվ-  
րաստիտսին մեծի Գերթողի :

Այլ էթէ զգովութեան բանան՝  
զոր արք հոյակապք ձօնեցին Գեր-  
թողիս մերում , կամիցի ոք 'ի շար

առնուլ, մասենի արդե ք պէտք են .  
չստ լիցի՝ զի առհասարակ կոչեցին  
զնա, Իշխան Քրիստոնեայ Քեր-  
թողաց . շատ լիցի և ընթերցանե-  
լեացն յառիլ յարդիւնսն նորա :

Սակայն և յոյժ գեղեցկապէս  
Վխոս յայս աստուածային Քեր-  
թուած գիտաց ըստ Բանաստեղծա-  
կան արուեստին զեռեղել 'ի Միջա-  
կին՝ զսկզբանն, և 'ի Սկզբանն՝ զմի-  
ջակին, այն է համբաւեալն Հոմե-  
րեան Իստիւմն փոճտիւմն, այս է՝  
Վերջնական Նախնական . քանզի սկսա-  
նի զառաջին Երգն 'ի վերջին գնալոյ  
անտի Տեառն յԵրուսաղէմ, և ապա  
յերրորդ և 'ի չորրորդ յԵրգն տայ  
այլոյ սրտմել յատենի ոճով զա-  
մենայնն միանգամայն զՔրիստոսի,  
սկսեալ 'ի ծննդենէն մինչև 'ի կէան  
աւարտման երկրորդ Երգոյն :

Եւ քերթեաց զամենայնն՝ 'ի  
Չափ տախց վսեմական Դիւցազնակա-  
նին՝ ըստ Հոմերի և ըստ Վիրգիլ-  
լեայ, այն է՝ յունական ձայնիւ ա-

նուանեալն Hexametrum, այս է՝ Վէ  
շալտին, համեմատեալ՝ որ ՚ի մեզ՝ եր-  
կարագոյն Ոտից հնգեաաասանից . և  
որ ՚ի սմա առաւել ներգաղնեակեալն  
է յանձանձիր հեշտութի լսելեացն՝  
Քառանգանոյն մերոյ՝ որ է 4-4-4-3:

Դարձեալ և զամենայնն երգեաց  
յոճ զանազանեալ ՚ի նոյն իսկ ՚ի Քե-  
րականական կազմութենէ բանին  
յԱրձակն . զոր սիրէ առանձին բա-  
նաստեղծական լեզուն . ըս որում է ՚ի  
մեզ ինգրէ Ոտանաւոր կազմութին  
(մանաւանդ որ բանաստեղծեալն ի-  
ցէ . և այն՝ Դիւցաղնաբար), ուրեք  
ուրեք, և է զի՝ բազում ուրեք, վայ-  
ելլարար զանազանեալ ՚ի սովորական  
չարագրացն յԱրձակն . որով և ըզ-  
Քերթողական հուրն յինքն ձգել  
րնաւորեցաւ Ոտանաւորն : Որպէս  
և է իսկ տեսանել զայս մտաղիր  
քննողացն ՚ի Շարականս և ՚ի Տաղս  
առաւել վսեմականս և եռանգունս՝  
Մերոց նախնի արգոյ Երգահանից և  
Տաղաչափից : Այսչափ ինչ հակիրճ

'ի Տամուս վանն այսորիկ . և Տոխա  
գոյնս տեսցի և այս՝ Օրինակօք յայ-  
լում մասենի յաղագս Արուեստի  
Չամբարանութեան :

Եւ քանզի ըստ քերթողականն աշ-  
խուժիցն յերիւրեաց Ա իտա զՆուխ-  
րականնն իբրև բանաստեղծ՝ և ոչ  
իբրև պատմագիր , ուստի և ըստ եր-  
կիւղածութն բարոյիցն ուրեք ազգ-  
արար այսպէս ընթերցանեւեացն .  
.. Եթէ ինչ մի , սակ , աստանօր կայ-  
ցէ հակառակ իմաստից Հարցն սրբ-  
բոց , համարեսջիր իբրև ոչ գրեալ " :

Այլ սակայն ուն և Հարքն սքք ըզ-  
ճարտարաբանութիւն զԱրտաքնոցն  
գերեցին 'ի քարտղութի Աւետարա-  
նին , սնայէս և սա զԻւրցազնական  
Բանաստեղծութիւնն առեալ տիրա-  
պէս գերեաց 'ի խաչն Քրիստոսի :  
Արդարև բոցավառեալ 'ի սէր աւ-  
տուածահրաչ Տնօրինականացն իմի ,  
յոր և վառէ Քերթողականն արուես-  
տիւն զկամակար ընթերցանելիան :



# ՔՐԻՍՏՈՍ ԱԿ ԱՆ



ԵՐԳ Ա.

Երթայ Գրիստոս Յրուսաղէմ :  
 Նախաձայնէ Առաքելոցն զմահն իւր  
 և վարժէ զնոսա : Ի խորհուրդ խմբէ  
 Բեշար զսանդարամետական գունդ  
 իւր : Նորաստեղծէ Գրիստոս զՂա-  
 զարոս 'ի կեանս : Մարիամ արտա-  
 սուրբ թանայ զոսա Գրիստոսի և օ-  
 ծանէ : Գրիստոս մտանէ փառք յԵ-  
 րուսաղէմ : Հրաշարի նկարագրու-  
 թիւն բժշկութեան 'ի Պրորատիկէ  
 առաջանին : Խարազանարախ մեր-  
 ժումն վաճառականաց 'ի Տաճարէն-  
 ուր և 'ի Մարմարինի քանդակեալ  
 զննեն Առաքեալք զվեցորեայ Արար-  
 շութիւն , և զքաջարութիւնս Նախ-  
 նեաց : Աինն շնացեալ արձակի 'ի սա-  
 տուհասէն : Ապա հուսկ յետոյ ելք  
 Գրիստոսի 'ի Թափօր արփիահրաշ-  
 արայծառութեամբ , և յայտնութիւն  
 Աստուածութեան նորա , սլլովքն  
 հանգերձ :

# Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ա Կ Ա Ն

## Ե Ր Գ Ա Ռ Ա Ջ Ի Ն

**Ո** ՋԾՈՎ, զԵՐԿԻՐ, ՀՈՂԻՎ անմահ  
Աստուած լինուս, և զԵՐԿԻՆ,  
Յիս քո լուսոյդ շնչ կաթնացէ,  
զԱրքայն երգել կրքինամին :  
Այն որ յարդանդ կուսին անպորձ  
էջ 'ի վերին 'ի գահէն ,  
Եւ կաթնասուն աճեաց մանուկ ,  
զօդ մեր շնչեաց տարբեղէն :  
Ձի Աշխարհի արփիացի մահուն  
իւրով քինահան ,  
Խաւար Բանդէն Թափեալ զոգիան  
Մղխնպոսին 'ի խորան :

Անպարտակիր ընդ մահ նորա երկիր  
գողաց լայնատարր ,

Քող և Արեգն առ լուսածեմ, զաչ  
խարհ պատեաց խոր խաւար :

Տուր Տէր լեզուա ինձ մահացու  
արժան ճառել զանմահից ,

Է՛ զի ուրեք և բիբ զաչաց 'ի լոյսդ  
յառել բերկրալից :

Ճաճանչ հասցես յիս արտաշին, զի՛նչ  
էր խորհուրդն այն անճառ ,

Ձոր հայր կրնբեաց, և գըժընդակ  
այնչափ մահուն զի՛նչ պատճառ :

Կալով օրհաս, քրքրանց վախճան,  
գայ Քրիստոսին մերձենաց ,

Եւ 'ի Սաղիմ գընայր կամառ նա  
'ի ծագաց Քիւնիկեաց :

Շառ ծերունեաց նորուն ըզհեա , ո  
րեան տաստիկ պատանեաց ,

Հրաշիցն 'ի լուր նահատակեալ ,  
գայր աշխարհին 'ի ծագաց :

Չի թէ՛ շինից գայր 'ի գագար , թէ՛  
'ի լերանց անմարդի ,

Չամբոսին ամբառ ո՞ ժրտեացի թը-  
ւով չափել սահմանի :

Խումբք գօտեպինդք նահատակեն ,  
յոր վայր տանէր սահմանաց ,

Կուռ և անդուլ միմեանց ըզհեա  
էր տեսանել խուռնընթաց :

Որպէս բարձուն 'ի Ա կասեղեաց 'ի սա  
ճարեր 'ի ծայրէ

Իջեալ Պագոս ' , զանգ արդաւանդ  
բարակ առուիւ ակօսէ .

Գնալով գրնաց թեւկօխէ , և վայր  
բազում պարուրէ ,

Լայն են հոսանքն 'ի զբօսանաց ,  
խօխոջն ահեղ ձայն հանէ .

Յառնէ յաղթօղ իբրև հրակայ , ա  
փունք բարձունք սարսեցան ,

Գետք զօրավիզ ասափ անափ , 'ի  
ծոցն յորդեալ խառնեցան .

'ի տաշան 'ի դար իւր շամփօփի , և  
մըրրիկէ մեծ յորձան ,

Եւ թափ 'ի ծով , բազմաբերան որ  
պէս վերսպ սայ հորդան :

Իսկ իւր յայնժամ նա Երկտասան  
ընկեր զատոյց յամբօխէն .

Նոքա հրաշիցն իւր այրընտիր ա  
կանատես վրկայքն են :

'ի խոր անտառ մեկնէ զնոսա , 'ի  
յանթն յենու 'ի Մայր մի ,

Գէմք թաղծագինք , և խոր յողւոց  
թառաղ հանեալ բարբառի :

„ 'ի կեան հասաք , լըջի , Ե՛զբարք ,  
զխնոյն կենաց ըզսահման .

Գայ կենախաւզն օր մերձենայ , Սըր  
բոյն ոգիք ինձ մընան :

Վասն այն Սաղիմն յայն ռիսերիս  
 անդ ելանեմք 'ի քաղաք ,

Անդ ահագինն ես կրտսանեաց եղէց  
 մահուն նըշուակ :

Ապարտ արեանս իմ դարանի անդ  
 երկցանցն վահակ ,

Որպէս գիտուն ձեզ ճառեցի եր-  
 կիցս անդամ ե երբեակ :

Գընամ ըզբիծ ջընջէլ նախնեաց ,  
 մահուն խնոյ 'ի հանդէս ,

Դու զիս այսքան , հայր նախա-  
 տեղծ , ցաւովք վիրօք վարակեա :

Դու ըզպըտուզն առեր քաղցրիկ ,  
 հաստին յորժամ քեզ արդէլ ,

Եւ ինձ ըզվրէժ քում գողօնին մը-  
 նաց զարդիս լուծանէլ :

Սակայն յեկցս երրորդ լուսով յոր-  
 ժամ ըստուերք փարասին ,

Եւ իմ վախճան հարուածն ա-  
 ռեալ , 'ի լոյս կենաց վերբերիս :

Իակ ձեզ դառինք մընան մահունք ,  
 որ զիս անդուլ պաշտեցէք ,

Աղէ ընդ իս քան սեր զստեաց ,  
 շուք զանմահիցն յարդեցէք :

Չիք աստանօր ձեզ տուն աթոռ ,  
 չիք ասա կայեան ձեր բընիկ ,

Ըզձեզ Արփուոյն կոչեն ասճարք ,  
 աստեղածեմն արքունիք :

Ուր կեանք անդ որք և գիւր քրտանց,  
ուր հայրենին և աշխարհ ,

Դուք զընծայիցք անդ փութայէք  
ը նեղն հորդեալ ճանապարհ : "

Ասաց . նոցա բերք 'ի խոնարհ , միայք  
ծըփեցան թաղծալի ,

Բայց գիմազբաւ եկաց Պետրոս ,  
զայս Տէրունայն պաղատի :

.. Քեզ զօրութիւն սր բուռն առնէ ,  
Աստուածորդիդ և Աստուած ,

Զայդ զայնն օրհաս առնուլ , և այդ  
գիմազբաւ ել վրտանդաց .

Ա'ր ինչ արժան , անէ արա' , միայն  
կեցցես ողջանդամ ,

Կարես համբուռն . ը քեզ և Հայրն ,  
որ Աստեղաց տայ շքջանն :

Ըզոյս կենաց մի' յոյժ ասուլ , և  
մի' սանհար գոլ անձինն ,

Ըզճառ մահուդ զայդ վաշտմբեր  
կարձեւ 'ի քէն , պաղատիմ .

Քեզ և քոյոցդ ողորմեսցիս , յիս Տ'ր ,  
ըզմեզ մի' լըքցես ,

Որ Բարունիդ յոր վայր խաղաս ,  
մեք հեռեխմք քաջապէս : "

Սայէս Պետրոս . առ նա Ահհազն ,  
.. Անմիտ , ասէր , շահնածե'ս ,

Աչք 'ի խաւար յարմիւոյն թափուր ,  
ցանդ բան յուրեւ մարդ կապէս :

Չեք քո երբէք ըզյոյզ մշտաց հո-  
գոց թափեալ տարապարտ ,

Չայդ , իմ քրրաունք կրցկրցեցին  
քում խորհրդոյ , շուք և զարդ :

Ոչ խորհրդոց և ոչ դքարաց կա-  
րօս է այս ժամանակ ,

Չանդարձ հրաման ունիմ ես Հօրս ,  
ինձ անհրաժեշտ նրպատակ :

Դուք առաժուր հարէք զերկիր ,  
տարայք քրրաանց , ով քաջք իմ

Չեղ մտացօնք լիցին մարդիկ ,  
խորհուրդք ուղղեալ 'ի յերկին

Թէ ձեր ընդդէմ 'ի կազ պայքար ,  
լեզուք շարժին մեծապանծ ,

Թէ զքրպարտեն , դուք ցընծացէք ,  
ողւով բերէք քաջարանջ :

Չեղ նախաափնք դարձցին խընծ-  
ղանք , տուք ձեր անձանց երանի ,

Չեղ մրցանակք մընան անշուշտ ,  
փառք տակտեզք աճեցի :

Մտաց , և անդ լերին բարձու 'ի կոյր  
գիմեաց թաղժագին ,

Յարեան ընկերքն ողջ գօտեպինդք  
ըզհեա խաղան Արքային :

Գընան , սրբանին ընդ օրահասն ան-  
պարտակիր Պատանւոյն ,

Գան 'ի քաղաքն Երիբոյին , վայր  
քաջարեր Արմաւոյն :



Անդ Չակքէոս ասպրնջական, սե-  
զան կահէ մեծահաց,

Որ թէ իրաւ, ջեանոյր երբեմն,  
և անիրաւ կուտել դանձ:

Իսկ լոյս առեալ 'ի յայն գալուստ,  
պարզե չիւրոյն մեծամիր,

Միոյն միոյն ըզզրկանաց, չորբաւ  
գարձոյց ըզկրչիս:

Ո՛չ շատացաւ, նա՛ և յիւրմէն 'ի գոգ  
սրբաւաց աղքատաց:

Մըթերք ամբաւ, ձոյլ և գործած  
ոսկւոյն իւրոյ քանքարաց:

Ըստ յեղակարծ ճակատ հարեալ,  
հրեշտակ եհաս բօթարեր,

Գուժեաց, եհար ըզլըսելիսն, ո-  
գւոյն թախիժ արկանէր:

Ո՛չ ինչ բացեաց անդ 'ի վայրաց, տէր  
Բեթանեաց էր Ղազար,

Այր ընչաւեա, 'ի քաջաղանց զարմ  
արքայից մեծամիտ:

Ե՛ր զի երբեմն հայրն Ասորւոց մեծ  
ասհմանին թագ կապեաց,

Ել 'ի ճակատ և մարտ եղեալ, շատ  
տիրացաւ քաղաքաց:

Չիւրամեծար իրրե ըզնա, մեծ վա-  
նասաւր մարդ ոք չէր,

Չի յարկ և տաւն նորա, բնաւից  
բաց էր ըզտիւ և գիշեր:

Ասա և Քրիստոս հիւրոյժ ըստէպ  
անոյր սիրով, և՛ դագար,

Եւ սիրելոյն զԱստուածութիւնն  
նչ ինչ կարաւ Թաքնաբար:

Արդ բոժ առեալ ըզնրմանէն, թէ  
տագնասպի ՚ի դրժար,

Եւ զախա մահուն նա ջերանի,  
դողցնս թէ էր շնչասպառ,

Քաջ յորհասին մըրցէր ՚ի դուրս,  
յոբւոց պարզել ապաստան,

Աչք Տէրունւոյն բրխեաց արուսը  
և զայս տուց յանդիման:

“ Գնացուք, ՚ի լոյս ըզբարեկամն  
ածցուք կրրկին փութապէս,

Միայն թէ Հայրն ինձ լրբիցէ և  
արգ փառացն ՚ի հանդէս: ”

Ասաց, դիմեաց ՚ի Բեթանեա, չո  
քաւ ըզհետ մեծ որեար,

Իսկ որ հրաշիցն ՚ի տես փութան,  
Թիւ էր նոցուն անհամար:

Մինչ այս մինչ այն, և անդ իշ  
խանն աղջամբըջոււտ աշխարհին,

Վիրազն ահեղ և զարամուր, Սան  
դարասլեա փթեխարին,

Այն զի առ դուրս որ եկն եհաս,  
չէր գրչխափին անտեղեակ,

Օր վե՛ժ խընդրին, որ մեծ զամուրս  
դիցէ նորուն նըշաւակ:

Նա յանհրաժեշտ 'ի ձայն Մեծին ,  
յանդունդս իջցէ 'ի խաւար ,

Եւ Գերեզարձն ըզմեղսաակէր առ-  
ցէ ըզԲանդն 'ի յաւար :

Տաղնապեցան բիւրասրատիկ , վա-  
րանեցան ծուփք սգուցն ,

Հնարի՞ արդեօք զարքայութիւնն 'ի  
մեծ Թափել Հարուածոյն :

Վերջն անդարձ կընքեաց խորհուրդ ,  
ըզմահ նիւթել Աստուծոյ ,

Եւ ցանդ 'ի նոյն կաց անասանն ,  
իբրև ըզվէմ արասաց :

Անմիտ . շետեա եթէ նոյն էր իջումն  
յերկնից Տէրունեոյն ,

Չի հարցն ըզմեղս յիւր կամաւոր  
նա քաւեացէ 'ի մահունն :

Անդ ետ ընդ ետ միահամուռ խըմ-  
բել 'ի գունն արքունեանն ,

Հրաման եղբարցն այն սևադունդ  
աղցին իւրոյ տայր սլասդամ :

Ո՛վ գունդ խաւար եւ ահաւոր , խօ-  
լից ամբաւ տեսարանն ,

Հարան ահա աւազամփոջն , 'ի ձայն  
ահեղ ետ նըշանն :

Հընչեաց խաւարն այն քարանձաւ ,  
սանդարամեաք անդընդոց ,

Եւ յաղթ մարմին գողաց երկրինն ,  
անձաւք կըրկննն 'ի խորոց :

Խուժեն յանկարծ անգ աղց Հրէշից  
Համուռ յոստանն արքունին ,

Աղց լուսասեաց խաւարասէրք ,  
Ճիւաղք անեղք երկմարմին :

Են միջով շափ մարդակերպինք , և  
յօձ միշտապ աւարտին .

Ազի քարչեն ըզժաւամաղ , տու-  
արն դալար անաղին :

Կէսք Վարդապայք և կէսք Պարիկք ,  
գանրչ անդեղեաց մարմինք են ,

Կէսք Չիացուլք և կէսք Նըհանգք ,  
Քաղք բոցաշունչք փորասուն :

Հաղար և այլք եկին Ընդդայք , և  
Համբարուք աղբեղէն ,

Եւ զոր մարդիկ բիւրս այլ անեղ  
Խօրականաց կրցկրցեն :

Խակ անդ հրաւառ իւր գագաթմամբ  
մէհ կայ իշխանն Երեբեայ ,

Տիւղ Հարիւրեան , զի յսղթ բաղ-  
կօք նա հարիւրովք պերճանայ :

Հարիւր և ձեռն , և ՚ի հարիւր բոց  
հագագէն մըրըրկի ,

Սա է իշխանն Անդրեղեհպետ , սա  
մեծ Գազանն ամեհի :

Անդ և ՚ի բուն ըզմահահոսան ըզ-  
ծուխ շնչեն միգամած ,

Աչք և բերանք , ոքնդունք և լայնք  
հուր թօթափեն կայծականց :

Վարսից փոփանն կախինն նոցա ծամբ  
 ահագինք, Օձք գալար,

Եւ սրատաանն, զեռունն անդուլ,  
 ընդ փողն ընդ ուլ կանն 'ի շար:

Կարթք եռարձէնք կանն 'ի բրոին,  
 հրաշէկ բառնան ջահ զամբար:

'ի հուր ըզարս խեթկենն նոքօք,  
 հնոցին մաանենն բոցավառ:

Ճեպենն և Այսք շորից ծագաց, որք  
 յընդ հանուրս թափառք են,

Ազգ բարեատեաց, բիւրապատիկ  
 գաւեալք ըզմարդ սոյթմաքեն:

Անդաթափառքն 'ի նոյն ճեպենն  
 հողմոց իշխանք մերբրկի,

Չեն տեղակալք, և 'ի տեղաարամ  
 չբրջինն նոքա գիշերի:

Եկին համբունն, 'ի նենդ 'ի գաւ սը-  
 բենն նոքա ըզթանիք,

Մարնչիւնն 'ի ներքս անդ խառնա-  
 զանջ հընչենն խառարն արբունիք:

Մինչև 'ի սեաւնն աղխեաց 'ի յաջ  
 Աբբայն, հրաշէկ եռասայրի,

Եկաց 'ի մէջ, և յորգելակ ձայն  
 զայս կարգաց ատենի:

Տարտարտսին Ախրագք ահեղք,  
 գուք զարմ երկնից լուսամին.

Չոր թափն երբեմն 'ի շանթ հրա-  
 ցանն անդուլթ վանեաց Աբբային:

Ընդ իս արար անդրնգասոյդ, երբ  
իւր գահուն պահ ունէր,

Գաւաղանին յոյժ նախանձառ, եր-  
կեաւ ունել նա ընկեր :

Մեք քանի՞օն 'ի խորս երկնից մարտ  
մըղեցաք անարգել,

Քանի՞ երկուց խէթ ճակատուց,  
հարկ է զյայանին յուշ ամել :

Նա աստեղաց Տէր ճոխանայ, և վայր  
ունի զարփային,

Եւ մեր յազդէն իւր թըշնամի, ըզ-  
գիէ՛ թ խընդրէ սխերիմ :

Լուսոյն փոխան և աստեղաց, իբրև  
Խօլից չարագև,

Ետ մեզ կաղաղ զայս ահագին, և  
յարկ յաւերժ անարև :

Նա և 'ի Թափ յայս խաւարին մեզ  
կոչկոճել ըզմարդիկ,

Ոգւոց ըզմեզ կացոյց արքայ, բա՛րէ  
տրխուր արքունիք :

Գահուն երկնից չիք սյլ յուսալ,  
պատիմք 'ի հող թանձրութեան,

Վի՛հ կայ ընդ մեջ, և գահն երկնից  
մարդոյն տըւաւ մեր փոխան :

Շատ նա շատէ, գարձեալ 'ի զէն  
չարժէ ընդգէ՛մ մարտ և գոս,

Գարձեալ 'ի խոր յայս արքունեաց  
վանել ըզմեզ կորակոր :

Վասն այն Սրբուոյն յըզեաց ծայ-  
րից նա Պատանի քաջազօր ,

Կամ Արգին է , կամ 'ի Զուարթնայ  
մի ոք յեղբարց թեաւոր :

Գայ և վանէ այն երկնաւորն ըզմեզ  
նորայն զարդ և զէն ,

Նըգէ զամուրս , շնորհեալ զողխան  
'ի մեր թափէ յաշխարհէն :

Թէ ոչ կըբրիմք , թերևս ըզմեզ սա-  
րեօք անլոյծ նա կապէ ,

Տարեալ յԱղխնայ իւր յաղթանակ ,  
յերկինս ըզմեզ խաղ առնէ :

Թեպէս մարմին զգեցեալ մահու ,  
այլ մեր զինուց անխոց կայ ,

Զի ճոխարար ընդգէմ վազեալ  
չսա ժրպրհեցայ ևս նորս :

Նենդ շարեցի , փորձ տարապարս ,  
( բոցց զիս խարանք ոչ առին ,

Զի յոյժ ներկուռ գոմ այգախեաց ,  
այս ինձ նըւար չէ նախկին ) :

Յոր կերպարանն ոչ փոխեցայ , զոր  
ախպ շատի դաւանայ ,

Մատեայ 'ի կարծ ևս ըմբռնել , նա  
հանապաղ զիս վանեաց :

Զէն ոչ շարժեաց , առէր միայն ինչ  
մի Նախնեաց նըւարէն ,

Մանդ զամենայն զիմ առակեաց ,  
և զիս կացոյց ապագէն :

Արդ զոր խորհիմ, ձեզ մերկանամ,  
գլնայ սա արդ 'ի Սաղիմ,

Թէպէս սասանիկ խեռան ընդ նա  
մեծին աւաղք քաղաքին :

Չի երկցունքն յոյժ սխեղիւնք, ձէն  
մի նրմա դաւ լարեն,

Չ'ի վրէժ անդուլ կրօնից խրեանց  
ըզնա 'ի մահն որսացեն :

Նա նոր օրէնս եզ ընդ քաղաքս, ըզ  
հին քակել զօրինակ,

Չեր սաս ահա պէտք են բաղկաց,  
ձեզ ահա դէպ ժամանակ :

Բոց բորոքեալ խեթիւ 'ի նա,  
Թէ անիրաւ Թէ արգար,

Ըզմահահոսան յոգիս նոցա Թոյն  
չքնչեցէք գողարար :

Մի Թողացին, մի խեթ չիջջի, գամ  
զայրացին քան ըզգամ,

Գուլ ոչ տացեն, յօրհաս ածցեն,  
ցանգ սուր հարեալք 'ի խրթան :

Խակ Թէ և զոք յԱրկտասանից դառէ  
'ի ձենջ ոք երբէք,

Մեզ գործն անչուն զքճարեալ է,  
ահ և երկիւղ չիք ուստեք :

Ու՛մ կայք ս՛վ քաջք, ձեւ մտաւ  
լուս սուք զօրավիզ վշտանդին,

Մերթ քոզամիդ, մերթ հոլանի  
պէտք են ուժոյն 'ի գոսին : "



Դասց, 'ի նոյն լինուլ հրաման բոր-  
 բոքեցան վառ 'ի վառ,  
 Խաւճապք 'ի դրաց ըսկըզնաչարք  
 գունդ կապեցին տարմարար:  
 Խաւժել խաւժեն և մըտընչեն, և  
 խաւարին Բանդ գողաց,  
 Եկին նրստան յոգըս Թեթե, Թե  
 Թեւածեալ Վիշապաց:  
 Անդ օձախաիւ բախեն ըզթեւ, և  
 զօգ ամբաւ հարկանեն,  
 Եւ տիրացեալ մերոց ծագաց, գա-  
 լառս բազումս հատանեն:  
 Ոչ ինչ այնպէս բիւրուց Մեղուաց  
 ամբք 'ի բարձունըս պարեն,  
 Եւ ծաղկաքաղք բերք 'ի պար-  
 զել ամարայնոյն գունդ կապեն:  
 Ամպահալած երբ հիւսիսոց սառա-  
 մանիք տեղի տայ,  
 Գընաց գիճինն և անդ հարաւ,  
 անձրեւայոյզն ոչ տեղայ:  
 Թե յարբայիցն յանկարծ 'ի մէջ  
 յուղի նոցա խեթ և քեն,  
 Գնա ճակատուն տան ըզնըչան, և  
 վերք մահունք յաճախեն:  
 Բարե երկրին, բարե ծագաց, զոր  
 Խօլք գրաւեն վայրագաց,  
 Բանի՞ օրհաս ժողովրդոց, քանի՞  
 ածցեն և հարուած:

- Ի**սկ Տերունւոյն 'ի Բեթանեա հա-  
 սեալ ընդ մեծ ամբոխին ,  
 Եւ քորքն ըզուք խըղեալ վարսիւք ,  
 Եզբօր շիրմին տան վերջին :  
**Մ**ին էր Մարթա , յառազաստին  
 շէլ նա երբէք սրբահապան ,  
 Միւսոյն զանուն Նախնեաց շինին  
 կարդան նրմա Մաղդաղեան :  
**Ա**ստուածորդին խնդրէ զտասպան .  
 Մարթա վաղեաց հիւրասէր ,  
 Կիք ըզերիմ , զՆդերասնարս , և  
 ընդ առաջ խուճապէր :  
**Ը**զհեա գայ քոյրն , և գերարասար  
 յաչաց բրխեն երկոքին ,  
 Եւ կանանւոյն կոծ և ճըշխեն ըզ-  
 դիակամբ ջայլէին :  
 „ Չխորդ եզբօր մեր յօրհասին առ-  
 նումք ըզքեզ մէք 'ի տուն ,  
 Քանի՛ ըզքեզ կարգայր , Շիւր մեծ ,  
 'ի պաղ հարեալ 'ի մահուն :  
**Ա**յլ հաւատասմք մէք , և աստէն  
 լուիցեն մարդիկ լու 'ի լու ,  
 Թէ աստ էիր , նա և զարգիս զօգ  
 նա շքնչէր կենսատու :  
**Դ**արձնչ և արգ , (զի քեզ Աստուած  
 էրք զըլացաւ ինչ մի տալ ) ,  
 Գիտեմք , ո՞վ Տէր , անչուչա 'ի մենջ  
 յոյս ամենայն շէ՛ բարձեալ : “

Զայս ինչ նորա պաղատեցան, և  
այլքն ըզհետ կըցեին,

Իսկ յաշխարհմբ, 'ի կոծ, 'ի ըայլ  
ըզվայր լնայր կանանին:

Տըրամազդեցից մեծ քաջալեր բանք  
ազդեցին Տերունւոյն,

Ասէր, ,, Ողջիկ քաղցր արևուն 'ի  
ըյս դառնալ սիրելոյն:

Տայէ զոր առ ժանիք հողոյ, ւար  
փին շորորդ ոչ ետես, ,,

Իսկ ապա քաջ ըզհամբաւ ի այս  
լուր հարաւ մեծապէս:

**Լ**նր նորասքանչ, և ժողովուրդ ի  
ջեալ լերանց տայր հորդան,

Մի ըզմիով 'ի տես հրաշից, անդ  
գունդագունդ խրանեցան:

Հաս 'ի շիրիմն, և պատանիք շուրջ  
ըզնովաւ առին բակ,

Ասաււածորդին 'ի միջակին կըրկին  
ձրգեաց ըզգաստակ:

Չըգեաց յերկին, և անքրթ ի թ զաչս  
իւր յառեալ աստեղաց,

Լնա Ծընողին յողոք մատեաւ, բա  
զուկք այնպէս 'ի տարած:

Ակընկառոյց և անմըռունչ մեծ  
խուժանին այս էր հոգ.

Զինչ նա հրաման, զինչ տայ նըշան,  
գործոյն այնմիկ զինչ ամբոկ:

Գոյն երեսացն հատաւ կըրկին, Թա-  
աաչ յոգւոց հան կըրկին,

Եւ միանգամ անդ ակնարկի ըզ-  
գլուխ շարժեաց նազելին :

Դողաց յանկարծ ելք տապանին,  
և արհաւիրք մեծ յուղեաց,

Բնաւից 'ի լանջ սրազն տիրէր,  
արիւնն եկաց երակաց :

Բարբառ յայնժամ զայս ինչ Վէ-  
հազն յոգւոց եհան 'ի յերկին .

„ Հայր անըսկիզբն, ես զոր խընդրեմ,  
գու չես անլուր իմ ձայնին :

Իսկ յայս սարգև քո մեծապէս ըզ-  
հարկ շնորհաց ունիմ ես,

Զի քո բազուկ զամենազօր խու-  
ժանս ամբաւ այս ետես :

Բաց գուք հայրս ո՞ սրտանիք,  
գրանդիս շիրմին շարժեցէք,

Առէք ըզվեմդ, և երիզապինդ մար-  
դոյդ ըզկապըն լուծէք : ”

Ճեպ անդեառն գառք սրտանւոյն,  
և վէմն առաւ տապանէն,

Վազեն խըռնին և զահանդեալք  
և այր զարամբ ելանեն :

Յակճիօս 'ի ներքս, և զականեն գի-  
և զանդիօն, և սրտան,

Տեսիլ անկարծ, գիական ինքնին  
խլրակէր անդէն 'ի մըլթան :

Ո՛չ ինչ յամեաց բարեկամին 'ի կօշ  
ձայնին երբակի :

Կանգնի գիակն և բարբառէր , և  
զօգ ծրծեաց կենդանի :

Յապուշ հարան , լ'ի ձայն նորա  
ունկըն տարփմամբ մատուցին ,

Կայր նա 'ի մէջ , պատմէր սճով  
զարկածն ահեղ վրտանդին :

Զինչ յօրհասին կըրեաց ժամուն ,  
քանի՞ երկունք պատեցան ,

Քանի՞ մըրցանք անդ և հողւոյն ,  
մինչև անդամք պաղեցան :

Դէմք քանի՞օն յոգւոց պարզել և  
տես խօլից արհաւրաց ,

Քանի՞ ցասունն ահեղ քանի՞ բոհ-  
մունք լուս ճիւղաց :

Զխորդ և Հոյք անդ թեւաորք  
Թուցելք յերկնից լուսատարր ,

Զեօրն տըւեալք , ըղջանկացեալն  
հաղիւ թափեն զայն աւար :

Թըռչին արգարքն , ասէր , 'ի լոյս ,  
և չարքն 'ի բոց գահավէժ ,

'ի ձեռս անդուժ մատնին տերանց  
և յանդընդոց հուրն յաւէժ :

Օ այս կատարեալ , յարկ Սիմոնին  
աղաչաւոր , մուտ Աստուած ,

Զոր կեղ 'ի բոր հարեալ երբեմն ,  
ամբիժ մարմնով աւաքեաց :

Այն ինչ նորա ՚ի հացկերոյթ ճա-  
 խից բաղմեալ մեծադանձ,  
 Եկեալ յանկարծ անդ սամաարեալ  
 Ազջիկ եմուտ գեղապանձ :  
 Նա ՚ի սընդոյր, և տեռն արկեալ  
 զանձամբ իւրով գեղանի,  
 Գերահընչակ ծոցն արծաթով յե-  
 աեալ յակի գեղանի :  
 Գրչու ինչ համակ ականակնուս, իսկ  
 քոյսն յակւոյ և յականց  
 Կրչիս հարուստ, գայր բեկբեկէր,  
 փարէր նորա փող զուլանց :  
 Քանչ լուսարփի ՚ի սաթ գըրգեալ  
 վարսից նորա գէս փայլէր,  
 Պընդեաց կարթիւք, և փընջաղարգ  
 ետ խապտայիս գանդբահէր :  
 Յոսկի ճարմանդ յուսոյն կախեալ  
 նորա աղխէր սրամուճան,  
 Յարեւընայ կրտեալ յականց և ՚ի  
 գանձուց Գանգէսեան :  
 Յակինթն ՚ի բոց ճաճանչ հատեալ  
 ՚ի ճակատու միջակին,  
 Յետոյ կախեալ հիւզք ճամակալք  
 ՚ի խնւն ականց ճաճանին :  
 Արաէս խոյտակն Երկիր զարգանդն  
 ՚ի սիւզ բանայ գարնայնոյն,  
 Եւ գանձ հարուստ զիւր հոլանէ  
 գալարաղեղ ՚ի ծոցոյն :

Սա 'ի ծնողացն իւր որբացեալ մը-  
նաց մանուկ առանձին .

Բազմահարուստ հօր դանձաւոր  
Ժառանգ եկաց միածին :

'Ի ախա մատաղ , ամբիժ կրօնից ան-  
քուն եկաց պահապան ,

Յարբունա տակաւ աւիւն բոցոյն  
այրեաց ըզնա Ատորղիան :

Շըրջեաց ըզխելան , և սխերխմ Այ-  
սոցն եկաց նա պատկառ .

Ա՛հ , հիբացեալն անձին պատուոյն  
երես երբէք ոչ արար :

Ղանեաց ղերկիւղն , ոչ լաւ համ-  
բան , ոչ շուք գիտացրն շարժեն ,

Ողջ լորբացաւ , և հարսնացու ան-  
կաւ արտաքս 'ի տանէն :

Մերթ 'ի կոչունա , մերթ իւրնձղա-  
լից 'ի կայթ գիմէր թատերաց ,

Խըզեաց ըզկասն , և ծերունեաց  
ըզբան քերէր նա յընչաց :

Եւ որպէս Նա թխալարաց թա-  
փուր յանդունդս Նգեան ,

Յորժամ յանկարծ այսք չքնչեցին ,  
ալիքն ելեալ գիզանան .

Չիք նորա հեաք , ծըփայ՝ ծըփայ ,  
գայ և գընաց տարածիգ .

Չիք նաւապետ , ուր և հողմունք  
ուր տարբերեն և ալիք :

Արդ պէ՛րճ այնպէս նա՛ի գանձ խոր,  
առոյգ տարփայր պատանեաց ,

Ո՞ դք չքնաղ ՚ի գիտակին ՚ի  
չուքն իցէ երեսաց :

Լըւալ յանկարծ այր մի հասեալ ,  
ըզնա Աստուած համբաւեն ,

Այր յոյժ չքնաղ , լըւալ խոյ-  
տաց , վաղեաց և գայր ՚ի տանէն :

Այն ինչ տարփանաբ նա միանգամ  
զերեան ետես գերաբուն ,

Եւ զահանեալ կաց յառեցաւ ՚ի  
չուք փառաց ճակատուն ,

Տես զԱստուածեան և բիբ զաչացն ,  
ուր բոցք սիրոյն ճարակին ,

Նա այլ յայլմէ , և շրջեցաւ անգ  
սիրան համբուն և հոգին :

Հուր իմն օտար և նորահաս , ՚ի  
լանջ նորա բոցք հատան ,

Եւ յեզակարծ ՚ի բերանոյն բո՛հք  
բոցաչունչք ցայտեցան :

Թուխ մըթադին եօթըն զամբար  
՚ի ծուխ շարաւ ՚ի գուրս գայ ,

Իբրև խանձող որ բոց վերջին թո-  
ղաւ ՚ի վեր և ծրխայ :

Եօթնադրլիսեանն , ստէր Աստուած ,  
սա՛ ցեց ոգւոց մեջամէս ,

Սա՛ զայս կրնո՞ղ գրաւեաց զոգին ,  
Այս կոչիո՞ճէր Երկննէս ? :



Խակ Մարիամ, (այս էր անունն),

նոր հասակցաւ արարած :

Չէր այն Մարիամն, որ անդ ար

ծաթ 'ի ծոցն ասկի սրարուրեաց :

Առեալ զոսկի ըզճամակալն հար

ըզգեանի քայռ զուլան,

Եւ նըչաւակ զոսկեճամուկն առ

նոր յանձնէն պատմու ճան :

Ըտորըջացաւ, և ողջախոհ փարի

'ի ծունկն Աստուծոյ,

Նըման որպէս Շուն տէրունեոյն

կայ սեղանոյն 'ի ներքոյ :

Համբոյր անդուլ բոկ տայր սափց,

ցող տայր զոսոգն արտասուաց,

Ջընջէր 'ի ձորձ, զոր նա յայլ սէտա

առեալ ընդ իւր և կած :

Անդ Կասիայ, հոտք անուշից, հան

'ի գանձուց մարմարեան,

Նարդեան աղնիւ, խէժ կընդըրկին,

զԱմսն անոյշ ըզրուրեան :

Այնպէս յորայս յուզս անու

շունս օժ ըզնորս գարշապար,

Եւ մինչ յեթերս անմահական բու

րումն եհան բերկրարար :

Առ զամենայնն և ընկալաւ Աս

տուած ոգւով մարգասէր,

Շնորհեաց ներումն, և հեշտարար

Թաղծեշտոյն գիւր աունէր :

**Լ**ակ 'ի վայրաց անդ խուռնընթաց  
խուժան ամբառ գայր խօթից :

**Ո**՞ պատմեցէ զկուրացն հանդէս,  
զ'ի ծնէ համերց և խըլից :

**Ո**՞ ըզխեղիցն, և որ խելաօք են զի  
ւարախք ամէհիք :

**Որ** աւարեալք 'ի Տերունւոյն, 'ի  
տուն դարձան քաջողջիկ :

**Յայնժամ** անախ 'ի Սաղիմացն զէմ  
եզ 'ի կոյս պատուարաց :

**Զոր** քն զուակ, ո՞ չայր այգեաց,  
Սեմ համբառեն թէ շինեաց :

**Յորժամ** ամպրոպք հողաթմաւալք,  
և ջաղքք կացին սահանաց :

**Եւ** ծովն ելեալ անդընդախոր,  
յիւր ծոցն եմուտ սահմանաց :

**Արա** Յերուք յաղեղն 'ի սուր  
զաղցըն վանեալ զառաջին :

**Եկին** նըստան, և յանուանէն զա  
նուն կարգան Քաղաքին :

**Անդուտ** Արքայք նախնոյն Յուդայ  
զարտ յարենէն և զուակ :

'ի գոռ 'ի մարտ յաղթօղք ազանց  
անդ հաստեցին Մայր Քաղաք :

**Աստ** Սողոմոն շինեաց արքայն, բա  
զին զամէն քայքայեաց :

**Տաճար** հարուտ, ըուրզն ահա  
զին 'ի կոյս ամբարձ աստեղաց :

Աստ և Սեղան, բեմ յաճախեաց, և  
պղղընձոյ կոնք 'ի կուռ :

Եւ ձորձ նախնեաց, ձօն Տաճա-  
րին, և ծիրանիա սակեհուռ :

Եդ և ասխեայս, և աշտանակա, և  
խընկակալս բուբուռաց :

Տաշտա պէսպէս, և աստանիա,  
պուանարդ 'ի շէկ պղղընձեաց :

Ըզփայան անփուռ, յորում Օրէնք  
ըզդուշացան սուրբ ուխտին :

Ձոր հայր գըծեաց ամենակալ  
վէմ սրբատաշ 'ի կրրկին :

Աստ ձօն արքայն տայր, քահանայն  
զարին հեղայր ոչխարի :

Չօնէր և Ազգն, յարին զօհից  
ոչ շաղախէր այլ տեղի :

Երկոս յամին աստ նըւիրել գայր  
'ի ծաղաց Իպրայէլ :

Աստ և ըտեւ սովորեցան ասք  
Տերունուոյն 'ի կօխել :

Յայնժամ բիւբուք զեզուն փողոցք,  
էրք հասանէր նա զուղին :

Անդուստ և բուրդն էր տեսանել,  
և ծայրք բարձունք քաղաքին :

'ի բուն գալար սառ ձիթենեաց 'ի  
ձեռս առին, և խայտան :

Նաև կողերք Արմաւենուոյն յա-  
րեանց բընէն կորզեցան :

Հեռեակաց մեծահանգէս խուճին  
հեռեւէր առաջի :

Ըզկնի օրեաք խըռնէր բազում, հան-  
գարտ քայլէր այրուձի :

Իսկ անգ Վեհազն 'ի միջակին, ախար  
հրաշագեղ բոցանայր :

Չէր նա 'ի ձի գոռ վերելեակ, ոչ  
յերիվար սսկեսար :

'Նա յուշ առնել, Թէ կեանք խո-  
նարհ արդոյ յոյժ է Արքային,

Յաւանակին բառնի քամակ, որ  
պէս գուշակքն երգեցին :

Գըլուին 'ի բաց, յուսոյն 'ի վայր  
պըճըղնաւորըն փարի :

Էր պատմուճան, զոր Մայրն ինք-  
նին մատամբ գործեաց նազելի :

Արկաւ մանուկ, լոչ մաշեցաւ ար-  
կեալն իբրու ձորձ ըզհին,

Իսկ օգ ունէր նա բոկ ոտիցն ըզ-  
լաշկամաշկ զարջառին :

Սապէս գալով նա մօտ շինին, մանկ-  
ացն կանուխ ել գասակ,

Գան օրիորդք, բոլորք ծաղկանց  
գունակ 'ի գլուխ ե գունակ :

'Նըւագ պարեն կողերք 'ի ձեռս,  
Ծաղկապըտակք քունք յայտից,

Եւ այր զարամբ, գէմք գեղանին  
գիտել մըրցին ցընծալից :

Բացանն և գրունք, և գունդ և  
մուտ իբրև յաղթող քաղաքի,  
Գան, և սղջոյն իբրև Փրփկչի, տան  
և իբրև Արքայի :

Պըսակ պըսակ առնուն, և տան սա-  
ղարթ ծաղկեալ ձիթենին,  
Եւ ձայն գոչիւնն եւ բարձրացաւ,  
գընաց մինչև 'ի յերկին :

Մեծ համբաւոյն ըզլուրն արագ  
լըւաւ քաղաքն և ծրփայ,  
Աւագորեարն 'ի վեր վազեաց, գէ-  
տակն ունի 'ի բացեաց :

Չամբըն փոշոյն յակն արկանեն,  
գընայր գիզան բարձրամայր,  
Վարանեցան շըշուկն 'ի նոր, յու-  
ղեն խընդրեն այր ընդ այր :

Ո՞ւայն իշխանն, որ բիւրք բիւրուց  
հորդեն ուղի և խաղան,  
Եւ զինչ այնչափ ջընծացեւոցն  
իցէ նըւագն յաղթական :

Խակ որ անգէտք չեն համբաւոյն, են  
Տէրունւոյն 'ի գասէն,

Գան Է առաջ առնուն զԱրքայն,  
ըզձափն ըզկայթ յաճախեն :

Աճեն գեանոյն և ծիրանիս, և գորգ  
ըզտար աշխարհաց,

Փողոցք գառնան մարգաղեափնք  
'ի բոլորից 'ի ծաղկանց :

Այն ինչ եմուտ, ամբոխ բիւրուց  
 ետես խրանեալ յերկուղին,

Չայն նա լքեք անդ մեծագոչ,  
 ոտք Տէրունւոյն կասեցին:

Լ'ր անդ Չորակ փակ 'ի բըլբոց ան-  
 տառախիտ աներման,

Ուր տեղադրաւք, ուր և առաք  
 յաւերժարար լըծանան:

Գան օրհորդք ճոխ քաղաքին 'ի  
 ջուր նորա պիտեան,

Եւ հինք հովուաց դիւր ծարաւոյն,  
 խաշին տային անդ հորդան:

Դեզ և ցաւոտ ոչխարակին եր կեն  
 տառիժն այն վըտակ,

Ուտի յետինքն ըստ համբաւոյն  
 Լիճ անուանեն և Ծովակ:

Լ'ր անդանօր շափոց խրանել, այլ  
 և ցաւոտ խուժանին,

Քանդի երբէք յուզէ՛ր երբէք,  
 գըրգանք հաներ ահագին:

Յուզէ՛ր ծըփայր մէջ ծովակին, չը-  
 սինդն յանկարծ անդ 'ի դալ,

Կապոյտ կահակն յերկին ցընցուղ,  
 փըրփուր ցայտեր ձիւնափայլ:

Լ'ր 'ի սամկեն զանխուլ պատճառն  
 այն ծըփանացն ահաւոր,

Միայն մանկափն և օրհորդք նը-  
 շան կանխեն լուսաւոր:

Ասեն ընդ օդ փայլակեանալ հոլա-  
 թեւան Պատանի,  
 Ոսկեճաճանչ են թեք նորա, հով  
 ծիրանւոյն ծածանի:  
 Իջեալ 'ի ծովն յուզէ խաղաղ նա  
 'ի կրրկին գառասկէ,  
 Հետք լուսահեա գրծէ հարուստ,  
 յարժամ յերկնից սաւառնէ:  
 Որպէս Աարամն հօրըն վերին, 'ի  
 ծիրն երկնից շրջապատ,  
 Զոր նաւազիցն եա 'ի նըշան, կամ  
 խըմբելոցն 'ի ճակատ:  
 Գայ գահավէժ 'ի բոց 'ի հաւր,  
 կայծ թօթափէ նա անհուն,  
 Եւ սիրաք սարսեն խամ խուժա  
 նին իրրե տերե խարչափուն:  
 Կան անդ ցաւաք գէտակն յեր-  
 կին, երբ ըզնըշանն է սաւոց,  
 Խաղաղ 'ի ծովն ակրնկառոյցք,  
 կան շականջին ձայն զօգոց:  
 Զի ընդ նըշանն այր այր նախկին 'ի  
 ծովն իջէ ալեկոծ,  
 Անդ մին մայն նահատակեալն  
 յախափն բուժէր 'ի ցաւոց:  
 Քաջք սրտանեաց որպէս զարձակն  
 ըզգալտ փոխեալ 'ի կրրկէս,  
 Փորձ քաջընթաց յարագ սփնն  
 այր զայր կարգոյ յապարէս:

Անդ 'ի նըշանն իբրու զողիս կա  
լեալ նոքա 'ի բըռին ,

Յոյժ գօտեպինդք և յտանխնատն  
յակճիւղս կան ձայնատուին :

Բայց և Թասե՛ն , բնաւից 'ի լանջ  
սիրարն արտփայ և Թընդայ ,

Եւ մէն մի իւր վայր նախընծայ  
մըրցանակին խոստանայ :

ԼՅԸ 'ի նոսա ոմն հիգացեալ 'ի  
յախա ջեռնոյր գըժուարին ,

Կոճղ անպխտան , ողջ անգամօք  
լոյժ 'ի բազուկն և յտին :

Յեարոս անուն , յանդերժ ախաին  
իբրու յանել կայր 'ի բանդ ,

Ընչեղ երբեմն , էր հայրենեաց ժա  
ռանգ անդոց արգաւանդ :

ԱՄ աւաբել 'ի շար ախտէն , ա  
ռոյդ հաստել ըզմարմին ,

Բա՛րէ , հաւատ նա ծայրայեղ ետ  
խաբուսիկ արուեստին :

Երբ զամենայն քար նա շարժեալ ,  
և զամենայն փորձ փորձեաց ,

Եւ արուեստին Բըժըկական իբ  
րու զամէն ոյժ քամեաց .

ԱՆ , հիգացեալն զաղքատութիւն ,  
գազանն ասեմ մարդախանձ ,

Առ 'ի վերայ բարդեաց ախաին ,  
Թափանց յուղեղն ոսկերաց :



- Քառիցքա տասն , առուրց նորա ,  
 անք ցաւազինք չափեցան :  
 Թող զսխտն անբաւ , ե՛ ՚ի սովուն  
 Ժանեաց մարմինքն հաշեցան :  
 Ի սա յայնժամ ակընկառեալ Ա. Բ.  
 քայորդին և Ա. Բ. քայ ,  
 Չորաւ և մօտ զայն օրինակ հեշտ  
 և ամօք ձայն կարգայ :  
 “ Զի՞ քեզ այդչափ , ո՞ հիգացեալ  
 դու սնախաստակ գէտ ամօնց ,  
 Աստ ցաւազին , ակընկառոց մը-  
 նալ ջրոյդ ծրփանաց :  
 Տես , զի արագ քոյին ընկերք դառ-  
 նան աստի խընձղազին ,  
 Եւ ՚ի մարմին նորափետուր , կո-  
 բով խայտան յառաջին : “  
 Իսկ նա առ այս , և արտասուք զայս  
 օրն թանայր յականէ ,  
 “ Զիք , Տէր , ասէր , չիք մեզ ջը-  
 րոյդ , ոչ աղբերակդ ինձ դըրժէ :  
 Այլ մինչ ըզժուփ գիտեմ ծովուդ ,  
 այլք անդ փութան տըքնաբար ,  
 Մընամ աստէն ես վերջոանեալ  
 իմ խեղանդամ դարչապար :  
 Նա և յայնժամ մենացերչս չիք զօ-  
 բավիդ , չիք ընկեր ,  
 Որ զիս կանուխ Տէր յայդ ծովակ  
 առեալ ձրգէր կենսաբեր ” :

Մինչ նա խօսէր, յառեալ հեղինկ  
 գեաակն ունէր Տարունին,  
 Ընկաց գու, ասաց, յոտից վերաց,  
 Են մեծաբայլ հաւա զուղին:  
 Չէ հարկ'ի ծովց յուսալ համբուն,  
 արի կանգնեալց գու քեզէն, "  
 Ասաց, անգէն, ո՞վ սքանչելեաց,  
 'ի վեր վազեաց 'ի մահձէն:  
 Ինքն ըզխշտեակն 'ի յուս բարձել,  
 այլոց քայլեր հաւասար,  
 Զի և կորո՞ն 'ի նա դարձեալ,  
 ջեզք պընդեցան և աճառ:  
 Որպէս Հովիւ տերեախիտ ոսորս  
 քաղեալ 'ի մայրեաց,  
 Եւ 'ի միջի Թըմբրեալ 'ի սաղ Օձ  
 մի բունեալ պարուրեաց:  
 Հովիւն անգէտ ածեալ ըզնա, մերձ  
 խարուկին 'ի բոց տայ,  
 Հաղիւ ըզհոտ առեալ բոցոյն, գը-  
 լուի վիրազն ամբառնայ:  
 Աստ անգ հրացայտ նա բիր յածել  
 գողցեն Թէ շանթ արձակէ,  
 Սողոսկ ընդ տունն, ահէ՞ղ շքչիւն  
 հանէ յեռասայր 'ի լեզուէ:  
 Իայց անգանօր կան պաշտօնեայք  
 'ի սեամ' նըտեալք հաճարի,  
 Չօն վաճառեն, զոր Բողո՞վուրդք  
 տան 'ի Սեզան պըղընձի:

Են սարարոյս խաշին գառինք, ար-  
ջառք, և զոյգ աղանին,

Քաւիչ մեղաց ՚ի ձօն սրաշաման,  
այր այր ամէր ըսա գոյին :

Այն ինչ մըտեալ, զայն տեսարան  
աչք զխտեցին Տէրունայն,

Զի յաշխարհին ՚ի գրօսանաց հըն-  
չէր ծրփայր վայրն ողջոյն,

Ոչ հանգուրժեաց, յերեքիւղին  
զաջրն զինեաց խարազան,

Գանին շըսինգն հարաւ թիկանց,  
սեւոյն վանեաց սրբազան :

Որպէս սաստիկ Հիւսիսայնոյն յԱջ-  
ջոյն բունեալ ՚ի քարայր,

Մըրրիկ յահեղ խուժեալ զօգոյն  
ըզգաշան առնէ վեր ՚ի վայր :

Գո՛ւ ընթանայ, վանէ զերկինս,  
ամբք ոչ ժուժան բընուածն,

Կըկունք սարսեալք յաղթականին  
օգք և ամպրոպք ակզի տան :

.. Սո՛ւ այս, ասէր, առն Աստուծոյ,  
Որ Էնն սասէն է բընակ,

Զոր զըժպատե՛հ գուք սըզձեցէք  
իրբև հանուժ և կըրպակ :

Հո՛սա իսկ ջոյս վայր ըսա հին կրօ-  
նից զո՛հք խաղացին ՚ի յարեան,

Եւ յապաժոյժ յաղեալ խաշին  
բե՛մք և սեղանք գունեցան :

Ամենակալն արդ հրամայէ , զա-  
րիւն խնայել ըզխաշանց ,

Ո՛չ ՚ի թըռչնոցն այլ հաստափ , ոչ  
՚ի ճենճերն ախանդեաց :

Չեզ նորակրօն ձօն պաշտաման ,  
արդարութեանն է հանդէս .

Միտք սրբբանուէրք , աղօթք ջեր-  
մինք , այս ձեր կրօնից ողջակէզ :<sup>11</sup>

Մայ , և անդ աղաչաւոր առ Սե-  
ղանոյն ծունկ կրրկնէ ,

Այնպէս ՚ի դուժս աղօթս առ  
Հայր , ՚ի խոր հանէր ՚ի սրբակ :

Իսկ և անդուստ սիրարն տասեր  
այն նախաթոռ Երիցանց ,

Հուր բորբոքէր ՚ի լանջ նոցա , բոց  
և զայրուց մարդախանձ :

Ո՛չ թէ նոր ինչ մտկոյնութեանն  
այս դառնարմատ բոյսք բուսան ,

Խէթք վաղեմիք , և քէն անջինջ  
յոգիս նոցա տըպացան :

Ո՛չ ժրպրհեցան դրրթել նմա , զի  
չաա ունէր նա որեար ,

Տեսեալ խաւթան , թողուն գրնան ,  
բոհմունք ածեալ վայրասար :

Արպէս ՚ի պահն ՚ի գիշերոյն , առ-  
վեալ Գայլոցն վահմակ ,

Բայ ըզգաւ ի թն և թէ դրաին հօ-  
ափն գիմեն ՚ի պառակ :

**Ա**յլ խնչ ընդ ասն եկաց նոցա ան-  
 քուն Հովուին ըրբ ականց,  
 Եւ խուճապեալք հարածեցան հա-  
 ջիւն 'ի Շանց և Վամփռանց :  
**Ս**ոսն 'ի ներքոյ դօշէ զնոսա, մեկ-  
 նին նոքա վայր յանշէն,  
 Կան և 'ի զուր ոռնա՞ն ոռնա՞ն,  
 մինչև լերինք հընչեացեն :  
**Ս**'ինչ նա յաղօթս, ընկերքն ու-  
 բոյն 'ի Տաճարին մի առ մի,  
 Զընենն ըզխուրդն ըզհրաշակերս,  
 ձեռին արուեստ ճարտարի :  
**Կ**ան հիացեալք, յանն արկանեն  
 հարիւր կոփե՛լ սիւնք մարմար,  
 Հարիւր և սիւնք կուռ պրղընձոյ,  
 լերանց բարձանց հաւասար :  
**Գ**ուրք պրղընձիք մե՛ծ ճրարնչան  
 պրղընձագոյց 'ի ծրխնեաց,  
**Մ**ոյժք և ձեղունք յաւերժ մայրից,  
 սալք մանրահատք առակաց :  
**Գ**րանդիք սեղանք 'ի զուտ ոսկոյ,  
 և Չոնք 'ի վեր կան կախեալ,  
**Ա**նդ են և Կառք յալնխաղից, և  
 փրղոսկիւրք ձիւնափաղ :  
**Ի**բրև այնպէս անդ հիացեալք զըն-  
 նեն նոքա վայր 'ի վեր,  
 Եւ Տարունին մերձ առ նոսա մա-  
 տեաւ մեղմով, և առէր :

Եւ յի մեծ Տաճարդ, արմատաբի  
 զեա հողմաժար մեծ սոճի,  
 Երոնդն հարեալ յոյժ ահագին,  
 կործան ՚ի վայր հոսեացի :  
 Եւ քեզ Սայգիս մընան տուգանք աւ,  
 տուածատեաց քոց դործոց,  
 Որ ըզԳուշակս յերկաթ մաշեա,  
 և կոչկոճեա քարակոծ :  
 Քանիցս անգամ ՚ի մի գընդել զոր-  
 դիւրն քո ցանն ու ցիր,  
 Քարոզ բանին ևս աստուածեան  
 փորձ փորձեցի ՚ի նանիր :  
 Արպէս և Մայրն այն ջրցնազարդ ձա-  
 դուցն յերամ ցիր և ցանն,  
 Կարկաւջ հանեալ թև թօթափէ,  
 ձագքն ընդ թևով քիւրմբեցան :  
 Սուրքեզ շողայ, և զէնք ըզքեզ թա-  
 դիդ սարսեն ՚ի դահէ,  
 Եւ գետք արեանց դնասցեն յերկիր,  
 հուր վրէժիւրնդիր լափեացէ :  
 Աչ տեսանես քեզ արհաւիրք կան  
 մաղիւ շափ մօտապուս,  
 Զի՞ ոչ բարգեա աղօթք յաղօթս,  
 ուր սպառնալիք են անսուս :  
 Լըցան քո շափն, Ամենակալն այլ  
 ուր կարդ սուրբ տալ ճըզնի,  
 Այլուր քաւել, և իւր պաշտօն  
 յայլում անուղ Քաղաքի : "

Լասց, և Աիճ 'ի նորասբանչ եցոցց  
 նոցա 'ի քանդակ,

Մեծ տեսարան, և յայտնութիւն  
 նախնի Աւուրց են վեցեակ :

Յորում Աշխարհ այս անարդիւ  
 անդ հաստեցաւ մեծապէս,

Անդ և գոյից կարգ, և Նախնեաց  
 քաջարութեանց կայ հանդէս :

Գործ հրաշակերտ, և երկրածին էր  
 անպատում 'ի լեզուաց,

Իսկ անդ տխարաբ շէն մարդատիւ,  
 շէն և գրօշեալք Ահհազանց :

'Ի գիծ 'ի նիշ ծածուկ անյայտ,  
 մեռն գրծեաց ճարտարին,

Հասա վնեւ գիտաց ոչ ոք, և ոչ  
 Գուշակք զօրեցին :

Լաս Էնն Աճ յանկերպ հաստուած,  
 զակն իւր յառեալ իբրև բոց,

Յաւերժ գիշեր, և զանպատրաստ  
 ըզխորս գիտեր զանգրնոց :

Տարերց գոյից իբրու կամեր օրէնս  
 հաստեւնս անլոյծ,

Ինքն հրացայտ ճառագայթիւք,  
 լուսով փարեալ անմատոց :

Անգուտ յամբոյն ոսկեճաճանչ,  
 զարփեացն հաստէ պարունակ,

Չերկիր, ըզժով, ըզոյս թափառ,  
 ում և շափեաց ամանակ :

Չի յայն լուսոյն հասցէ Արփուոյն  
Ճաճանդաւուն խա հրակային :

Կա ե խարոյկ զարմանազան , արկցէ  
Բոցոյն 'ի յերկին :

Անդ ե կայծխոք սգար մեծ առեալ ,  
ե ծափահարք կան Հասարչին

Չորք երկնաւորք , սղխք հրեղէնք ,  
Լուսոյն հասարաւած առաջին :

Չն հող 'ի ջրոյն , ե ոչ յերկրէ եր-  
կինք զառեալ արփայեան ,

Այնպէս տարերք էից համբուն ,  
անդ խաճանխառնան անկեղկան :

Այն ինչ Արկնից գայր յերևան եօթ-  
նասանգեան շքըջանակ ,

Եւ հրարորորք լուսաստարից կարդ-  
տայր գունակ ե գունակ ,

Ազար տակաւ ե գոյք ամէն նոր  
առնուին կերպարան :

Իսկ ե յերբում յակաստանին կային  
Երկինք անաստան :

Ե՛ր անասնեղ Յամեք կարկառ , 'ի  
միջակին տարածիդ ,

'ի գոգ ափանց պատեալ ըզնա ,  
Ըուրք գան բախեն ամեհիք :

Կահակ կահակ անդ խորտակին , փըր-  
փուրքն յասակ զա են գիզան ,

Եւ չն Լաստից ծովագնացից լայն  
պատարառուիք պարզեցան :



Չէ և 'ի դաշան յայն հասանաւա  
ուժեն թիակք, Զուրք ծըփին :

'Ի սիւգ 'ի քաղցր 'ի զեփուսեան  
անոգ Ծով ծըփայր ծիրանին :

Յանկարծ յՌփեաց, լերանց կատարք  
սեպուհք ելեալք, ծածկեցան :

Եւ մարդարայր առ 'ի ներքոյ, հո-  
վիար խոնարհք դաշտացան :

Հող քաջարոյս ծիղ ընձիւղեր, եր-  
փըն և երփն 'ի ծաղկանց,

Եւ սաղարթիւք ծիծաղախիա ծառք  
զարդարին հերասպանծ :

Էր տեսանել և դաշտ և մարդ դա-  
շարագեղք զանազան,

Իսկ 'ի մարդաց նախանձ առեալ,  
գան և բըլուրք յերևան :

Անառախիա կատարք նոցա կան  
'ի սոսիւն յերերի,

Անդ և Սղոցիք և Չիթենիք, կո-  
նոնարեր և Նոճի :

Ճաղեն յանկարծ և Լուսարք  
կըրկին յերկին կապուտակ,

Երիկածինն ըզգոյս իւրեանց լու-  
սոյն գընեն նրպատակ :

'Նոքա իրրև կան Աշխարհի անքուն  
պահարդք նորասքանչ :

Եւ գաս 'ի գաս կարդ յանցեղլի,  
փոփոխ նաւթնն ըզճաճանչ :

Քանզի Աբեգն աղբիւր լուսոյ, շա-  
 փե զՈղբմազ ըզցերեկ,  
 Պատի շքջի, գունե զերկիրս յե-  
 րանդ սսկւոյն գոյն 'ի շէկ:  
 Իսկ կայ Առսին փոխանապաւ, գըժ-  
 գոյն ըզցայդ 'ի ստուերի,  
 Ընդ ըզլուսոյն կաթեն նորա մա-  
 հիկ եզջիւրքն արծաթի:  
 Անդ և Ասակք վառեն զԵթեր  
 գիշերափայլ 'ի յականց  
 Յաւերժական սուեալ հոլով, 'ի  
 ծագ ձրգին 'ի ծագաց:  
 Առ այս գարձեալ, տըտամբք երկ-  
 բաշխ գաշտ հոսանուտ ակօսեն  
 Ազգն անմեռունչ, աղգրն թեփոտ  
 զանգունդս 'ի լիւղ հատանեն:  
 Կըշտեն ըզթե, ճախրեն ընդ օդ,  
 Թըռչունք ծաղկեայք 'ի նըկար,  
 Եւ 'ի կըսոցայն 'ի կարթըն գան  
 այր ընկերին 'ի պայքար:  
 Ո՛չինչ բացեայ գընան թափառք  
 Ըսկք Անդեոց 'ի գաշտին,  
 Եւ լուսակիզն Օգիք խայտան զը-  
 լարթ մարդաց 'ի գեաին:  
 Գազանք վազերք յայնժամ ա-  
 հեղք բաւիղ կազազ որոնեն,  
 Տիտունք վիշապք երկայնադէզք  
 սուտն ահագին քայրչ ածեն:

Անդ վերնաձե՛մ և մե՛ծ Արքայն  
գողցն՝ս յամբոյն լուսափառ

Խրախոյս նոցա, տայր քաջալեր,  
և ձայն աղգէր բարեփառ :

« Երամտփն բազմացարնք, ի մն ա  
ձեցէք արարած,

Եւ ձեր յաւերժ ծընունդք զա-  
ւակք լիցին գարուց և աղգաց : »

Եւ ՚ի վերջէ մերկ Մարգ յերկրէ,  
փայլակն իբրև լուսաձե՛մ,

Գողցն՝ս Հաստիչն օրէնս նրմա տայր  
և խօսեր դէմ առ դէմ :

Թագ և նրմա կապէր անմահ, զերկ-  
րին ունել գաւազան,

Եւ ուխտատարս՝ կալ անաստան յան  
գրբժեղին պատուիրան :

Է՛ր անդ և Մարգ հրաշածաղիկ, ուր  
ծառք սատովք հարուն ծափ,

Բայց և պրտղոց պահակ բունեալ  
կապուտերանդ կայր Ա իշապ :

Ազբիւր ՚ի մէջն էր արծաթի, քա-  
ռից մարդից գետահետ,

Ջուրքն ՚ի հողոյն սուղել յարգանդ,  
զանդ բաժակինն մէա ՚ի մէա :

Ա՛հ, Պատանին անդ Թակարդէր ՚ի  
գաւաձան Ա իշապէ,

Կընքեալ ծառոյն ուտէ զպրտուղ,  
պատուիրանինն ունչա առնէ :

Հաղիւ զճաշակն առ հիբացեալն,  
 երթ զօղեցաւ 'ի մայրին,  
 Եւ սրբաառուչ ոչ հանդուրժեաց  
 սաստիկ դիմաց Արքային :  
 Չի ահ թափեր մեծ յանցուածոյն,  
 նորա յամբոյն ահեղ ձայն,  
 Պատիժ զարժան գոռայր նրմա, և  
 որ ըղհեա 'ի լոյս գան :  
 Իսկ Կողածինն, որ նախ գաւեալ  
 ուխտին գրբեաց տէրունին,  
 Այն հիբացեալն 'ի զուր խաւճապ  
 զօղեր թըփոցն 'ի թափն :  
 Բաց յաղթականն ապարթանեալ  
 'ի գաւաճան իւր գործոց,  
 Վիշապն այն կուռ պրղընծարտեան  
 յիւրն խայտայր քընթընոց :  
 'ի յաղթ իրան ճապուկ Սողունն,  
 երկցս առեալ վաղ 'ի բունն,  
 Ուրտացան կընձիռն յահեղ պա  
 տեանց ըղձառ զայն համբուն :  
 Անգ 'ի վերուստ, գեմք իգակերպ  
 բախեալ թեւք մահաբեր,  
 Անգուժ և լիր, ըղգաւելոցն ո  
 գիս հարեալ խաղ առնէր :  
 Այնչ բացեաց էր տեսանել Բանդ  
 խոր բաւիղ ահագին,  
 Յարկք են անդէն խաւարարդեւք,  
 լոյս թալացեալ Արեգին :

Ուր և Հոգւոյն երամ սրբոց անդ  
արգելեալ Նախահարք ,

Վնասու միայն , Ժառանգք լուսոյն  
սպասեալ մընան կարգ 'ի կարգ :

Են հինաւորց արեք ծաղկեալք ,  
Գուշակք ամեալ վարասկալ ,

Ծանրեալ բազուկ ամբառնային  
յերկինս 'ի վեր աստղափայլ :

Ողջոյն զերամն հայրն Աբրահամ  
Թիկունք լայնեալ վայր 'ի վեր ,

Գոգ մեծ պարգեալ , տարած բազ  
կոք յաջ և յահեակ պարագրէր :

'Նոքա երկնից մեծ Աբբային յողոք  
մատչին դաս առ դաս ,

Խնայել , և մի փնասու միոյն ընա  
ւից ամեւ պատուհաս :

Աստ Բարուեին վայր մի կայեալ 'ի  
խոր սրբակն Թառանջ հան ,

„ Դոքա , ասէր , Թախանձ արկեալ  
մընան մահուն մեր քրրոան :

Օ՞ն մեք գնացուք , ես պարտական  
'ի մահ մասնխմ և 'ի խոց ,

Թափեմ բանդէն զերամ գոցա ,  
Ըզնիդ փրչեմ գրժոխոց :

Բա վաշտմբեր գոցուն կարեաց որ  
ինչ նըշխարք կան մնան ,

Մնչուչտ իմոյն յարիւներանդ կա  
նուխ քաւին 'ի մահուան : „

Լ'նդ և յարկած աշխարհի համայն  
 նաջինջ մեր ազգին ,

Աջ Անեղին հովանացաւ , նուա  
 զունք նըստան 'ի Լաստին :

Անքոյձք յալեաց , արգարք 'ի ներքս  
 հարուն ըզժամի և ըզկայձ ,

Մինչ սաստաներ ծրփայր 'ի խորս  
 այն ահագին Լաստափայտ :

Հագիւ 'ի դուրս գան յալձ լերինք ,  
 բոջք զամբ յայնձ մ' պատառեն ,

Կըրկնեն երկինք և երեքինեն , փայ  
 լակեացայտ և շանձեն :

Լ'նդ և Ծերոյն շողացուցեալ մեր  
 կապասեանն ըզուսեր ,

Հայրն աղէկեզ Իսահակաւ հրա  
 ման ընոյր մահարեր :

Ճգներ 'ի գործն , աջ ամբարձեալ  
 մեծ ծերունին նահատակ ,

Չն էր դարձեալ յեա կոյս թիկանց ,  
 գայր սաւառներ 'Արարակ :

Պատգամ բերեալ նըստ յերկնից ,  
 նախկին ընդդէմ պատգամի ,

Տե՛ս ծերունի՛գ , քոյ զոհն , ասեր ,  
 մերձ քեզ արօտ ճարակի :

Փոխան մանեկանդ որ ոչ գիտէ , նա  
 կայ 'ի սպանդ պատարասեալ ,

Դու զայն հանցեա Էին նըւէր , Խոյ  
 ատարարոյս ձիւնափայլ :

Մեզ և Լղբարք վասն Երազոյն զեզ  
բայրն ասուն, վաճառ ասուն,

Հօրն հիգացեալ սրտն զօրհասն,  
ասուն, թէ դէշ եզ Գազան:

Հայրըն զորդւոյն 'ի ձեռս ասեալ  
զարիւնսոց պատմու ճան,

Յօղովն աչաց կայր և թանայր,  
ուր է, գոչեր, գերեզման:

Մեզ և 'ի կեա երկայն վըշտացն,  
'ի սահմանաց Փարոսին,

'ի խոտացեալն 'ի գահն ամեալ  
օրէնըսգիր Ահհազին,

Այն ինչ խուժանն հրաշիւք ամբաւ  
'ի հայրենին գարձ ասնէր,

Յազգըն թափառ յանապատին օձք  
զեռային մահարեր:

Եւ զե անթիւք խարու կեցան հրա-  
շունչ օձիցն յանշէջ բոց,

Եւ զե ամբաւք դիակենացան 'ի մա-  
հահասն 'ի խայթոց,

Նա 'ի գաշտին բարձր 'ի ձողէն Ախ-  
շապ կախէ պրղընձի,

Փըրկիչ 'ի Փայան, օձահարիցն  
ասեր, բիբ տալ կորովի:

Մեզ և ուրեք կըրծոցն 'ի լանջ կը-  
տուց հարեալ սայրասուր,

Հաւն այն թրուշուն 'ի վերըս խըր  
ձագ բուժանէր անփետուր:

Չաղթն ըզնովաւ առեալ ըզբակ յա-  
րիւն խայտան մայրենի :

Լանջ փեռեկեալ մօտ քաջ զըննել,  
ձագ ընդ ձագուն պայքարի :

Օ այս ինչ զըննեալ, և երկբայիկ  
ընդ դուրս ելեալ Տէրունւոյն,

Յոյժ մըտախորհ, ընդ աշտիճանս  
չև նա իջեալ էր ողջոյն :

Շքոնդն հարեալ, կին հերարձակ  
ձրդէր քարշէր անդ խուժան,

էր հինօրեայն, կին, Մանասեայ,  
դէմք թաղկացեալն այն Շուշան :

Ըզնա իւր հայրն, ՚ի տես ծաղկեալ  
ազջիկ չքնաղ ՚ի դիմաց,

Թեպէտ ջահիցն երես չարար, առ  
դրժկամակ և զուգեաց :

Դըրժեաց Շուշան առադաստին,  
պարսից քարանց ձայն տային,

Խուժք պատանւոյն, մանկաին, խու-  
ժան, ըզքար կալեալ ՚ի բըռին :

Կանխեաց Երէցն, ոչ տայր ըզկինն  
առնել քարանց նըշաւակ,

Մինչև դարձաւ, և ըզՔրիստոս  
գաւիթն ետես յընդարձակ :

Գայ չարարուեան, և մօտ սեմոց  
ըզկինն ըզհէք առ ձրդեաց,

„ Սա այս, ասէր, առադաստին  
ուխտին գըրժեաց հարսանեաց :



Արդ յայն ոճիր պարտաւորին տալ  
 պատու հաս մահազղեաց ,  
 Կընքեն օրէնք , բարե կրօնցն , կոչ  
 կոճ լինել 'ի քարանց :  
 Մէք առ քեզ գամք , ո՞վ Գուշակաց  
 դու հեղ թարգման և ամօք ,  
 Քո զինչ կարծիք , լսել խնդրեմք  
 փոյթ մեծ կալեալ և ըզհոգ : :  
 Ասաց , և անդ մտք մտրասին երա-  
 զայոյս նանրացան ,  
 Կարծեաց յանելն և յանփախուսա-  
 ունել ըզՏէրն յարգելան :  
 Զի թէ հեզիկ նա գորովեալ , թա-  
 փէ ըզկինն յորհասէն ,  
 Ըզքարն 'ի նա ըզխուժանին կու-  
 տել իբրև յանօրէն :  
 Իսկ թէ կընքէ նա ճոխաբար , յօր-  
 հաս մահուն տալ ըզկին ,  
 Իէթ յոխերիմ յայնժամ ըզնա  
 դխնագրաւել ամբոխին :  
 Յայն մտայոյզ իբրև յաղթօղ , յոյս  
 մի կալեալ նա ընդ վայր ,  
 Այն ազաջուրն առ մեծ խընդին  
 'ի սիրան յայնժամ փըքանայր :  
 Արաէս 'ի քուն արօրադիր ետես  
 Մըշակ յերազի ,  
 Յորժամ 'ի խոփն իւր ահօսեալ  
 հողոյն արգանդ պատառի .

Կարծեաց փորել գանձ ընդ հողով

Չոյլ մի հարուստ սակեփայլ .

'Ի վեր վազեաց , 'ի զուր խայտաց ,

Մինչև ըզքուն թօթափեալ .

Չարթեաւ , և դեռ քրրանաւա-

տակ , ետեա , եթէ աղքատ է ,

Յայնժամ ղերաղն , յայնժամ ըզ-

բախան 'ի միասին նըզովէ :

Հնարեաց Աստուած , (զի անձեանք

մարթուն մարդկան են անհաս) .

Չի և 'ի հէք խնայեաց 'ի կինն ,

և օրինաց շեղ վընաս :

Չակն 'ի դեանոյն 'ի վեր յառեալ

'ի գօտէպինդն յայն խուժան ,

.. Անշուշտ , աակր , մահ ըն նախնեաց

այդ յանցուածոյդ է արժան :

Արդ , դուք աղէ , ո՛րք 'ի ձէնջ

'ի յանցանաց է անբաժ ,

Քարձիգ լիցի ինքն առաջին , և

կարդացէ իւր վա՛շ վա՛շ " :

Իակ ո՛ երբէք յայն խուժանէն ,

սիրտ ապառուժ և յայրատ ,

Ո՞ր առաջին քարձիգ լինէր , և

զինքն աակր անարատ :

Աաց , հայէր նա 'ի խանարհ խո

Տո՛ւ ախանք ստեղծի .

Պատրատա գըրել յանձնադատան

մարդոյն ըզմեղս 'ի դեանի :

Կայր մանկամարդն ըզգողանի՛ ՚ի  
մութ մահուն միգարեր ,

Աչքն ՚ի խառար , ծունկքն յերերի ,  
՚ի մէջն անկեալ կիսամեռ :

Որպէս անկեալ Եզրն մատաղ ՚ի սլա  
ռական ե ՚ի ցանց ,

Ող ահարեկ յերկայն վաղիցն ե  
՚ի հաջել Բարակաց .

Հուրջ Թըշնամեաց գիտէ ժանիս ,  
համբուն թափեալ նա յուժի .

Յողւոց սարդէ , ե մտաշուա օ-  
րահասին ակն ունի :

Չայս Տերունւոյն իբրև այնպէս  
անկարծ լլւան սատասխան ,

Յանկարծ ոգիք բեկան նոցա , ե  
ամենիքն հեղացան :

Անդ ընդ ակամբ այր նըշմարէր , ե  
այր հայեր ընդ ընկեր ,

Եւ անձնընտիր յայն ամբօխէն ոք  
գիմազբաւ չընծայէր :

Բընաքարիցն յերեանց ձեռաց  
տան զերծանել գաղտարար ,

Այր այր ոգւոյն իւր գիտակից ,  
Թողուն գրնան ըզՏամար :

Իբրև գարձաւ ետես Ատառած Թա-  
փուր ըզվայրն ըզգաւթի ,

Մանկամարդոյն լոյծ ըզկասպանա ,  
որ կայր ՚ի գող յերերի :

Առեալ ըզնա և արձակեաց, քա-  
 նիւք ելից բարեզգեաց,  
 Նա 'ի վերջնումն յոյժ լաւացեալ,  
 և զառաջնոյն բիծ ջրնջեաց:  
 .. Դարձաւ ապա և ընկերաց, Վայ  
 աղգ, ասէր, խեղաթիւր,  
 Յանգ խեղ նք, ջանգ և ժրպիւրհ,  
 Երբէք կըբիցն ոչ տան գիւր:  
 Սըրանին գոքա, զի մերթ 'ի տօնա  
 յախակն ըզխօթն ես բուժեմ,  
 Մերթ գիրկ ամեալ, ողորաւոր զա-  
 պաշաւեալան արձակեմ:  
 Երթ թէ և իմքս անխորտարար  
 և անլուայք հաց ուտեն,  
 Ան հիբացեալք, և շատ ինչ ալ  
 գոքա 'ի մեզ յաւակնեն:  
 Դա և ժրպիւրհն օրհասարեր հաղբ  
 ինձ լարել գողարար,  
 Արսան, ընդ իս Հռոմայեցւոց զաղ-  
 գըն ձրգել 'ի սպայժար:  
 Նենդապաախրք գան և խընդրեն  
 վասն արժաթոյ արքային,  
 Ըզհարկն արդեօք արժան է տալ,  
 զոր Հրովարտակք կընքեցին:  
 Դոցա հրաշից շաղգեն նըշանք, զոր  
 ոչ արուեստ ինչ ուժէ,  
 Կին լուսոյ կըբրին ընդդէմ զերթ  
 զաշացու կոյրք 'ի ծնէ:

Չեմ ես լուծիչ հինն օրինաց, խոր  
խորհրդոց է գա ծով,

Այլ սրբութիւն ե այլ խնայան  
գաղէ բանիցն ընդ ամբով :

Լրուեմ զայլոց, հիմ գարշ իցէ խոր  
տիկ խողին 'ի սեղան,

Չիք մեզ սգւոյն, թէ՛ յայս թէ՛ յայն  
գուք լուծանէք ըզբերան :

'ի ներքս 'ի ձեզ միտքն սղղծեն,  
ե ցանկութիւն մոլեգին,

Թէ՛ ոչ այսպէս, ամէն ասեմ, ոչ  
մեղանչէ խողենին :

Բայց զի թաւալ ընդ գայս ընդ մօր  
է ստեարոյսդ այդ խողեան,

Ասան այն 'ի գա՛ պատկեր զազիր  
հովանապրի Աստղիկան :

Տակաւ Հաստին, երկնաւորաց զո-  
գիս գործել հոգաստար,

Եւ զի խուժանն ուսցի տրքնուզ  
կրօնից միում կալ պատկառ,

Յազել զենուլ նա հրամայեաց գա-  
սակ զանմեզ ըզգառին,

Եւ երբնջոցն 'ի սուրբ Սեղան գու-  
նել արեամք հոյ զերկրին :

Այս ամենայն, ում միանգամ  
միտք հաստեցան խորազգեսաց,

Նորոյ Արօնից նախանըկար տխրք  
տըպացան հայելեաց : "

Վայր երեկոյն , և յՈղիմպոս լու-  
սոյն ծածկէք Նրեակ ,

Եւ նա յայնժամ չորսու ելիք զԱ.  
տուածամարան ըզքաղաք :

Նախ քան զօրհասն ըզձայր ուրոյն  
խօսել ընդ Հօր ծածկաբար ,

Ուստի զընկերան եթող անդեա  
ձոր Թափօրին 'ի խոնարհ ,

Ինքն ել եկաց 'ի սեպ լերին , ուր  
մայրք յաստեղս սօսին տան ,

Պետրոս , Յակոբ , գոն ուղեկիցք  
և մըտերինն իւր Յոհան :

Նորա յաղօթս , և անհրառենչք դաս  
ասկք 'ի վեր , աչք յերկին ,

Իսկ նա առ Հայր զայս բարբառէր ,  
սիրով լըցեալ գերարփին :

„ Չարդիս , ս' Հայր , Որդիս անպարտ  
գառն օրհասին գամ 'ի վեդ ,

Գամ ընդ անբաւ ես ապաժոյժ ,  
և ոչ հրաժեշտ տամ երբէք :

Եւ զի անշուշտ քո այդ են միտք ,  
քո այդ են կամք մեծապէս ,

Եւ զի այդչափ արժեն մարդիկ ,  
ոչ գանդաղիմ , Ահա՛ Ես :

Դանեա զտոսա , որ զհայր և մայր լը-  
քեալ , ընդ իս կան անգուլ ,

Դու զայս անմեղ զիմ Այրընախր  
'ի կրից թափեա՛ 'ի զանխուլ :

Չէ ինչ ինձ փոյթ, թէ ամբա-  
րիշտք դայցեն դոցա 'ի վշտեր,  
Քանզի և դամբ հնարից մարդկան  
նչ ինչ ուժեն մահաբեր:

Խառլիս ևս ոչ, և թէ դոքա հա-  
մուռ անկցին գիտապատ,  
Կամ թէ կամիս, գու ըզդոսա 'ի  
շանթ հարցես մեծասատ:

Միայն զարկածն հար ըզլարին, և  
ըզքոյին տուր օձան,

Եւ քրտնաբեր այս մեծ հողոց  
գու ո՞ հայր իմ, տուր վախճան:

Եթէ այնչափ քերան հասանէ, ըզ-  
մարզն ամել 'ի յերկին,

Եւ փոփոխուին էից տրեւալ, 'ի  
դարն ամել 'ի նախկին,

Միայն մաղթեմ, այն Սեւադունդք  
յահէզ խուժեալ Վիրապէն,

Շունչ մահահոտ մի գաղտաբար  
հօան յիմ փոքրիկ փրչեսցեն:

Մի նենգ մի գուն յաջողեսցի,  
իմ դեան գործել երամոյն,

Յորժամ հրապոյր խառնեն դոքա,  
մի հովասցին մեր սիրոյն:

Փաղանդք զարդիս դարանակալք  
առ գուրս ահա հասեալ կան,

Չէ են յաղեալք, և հեղձամուղձք  
յողիս 'ի հուր տապանան:

Քանի՛ քանի՛ հնարից ՚ի նենդ առ-  
ցեն սրտախր ատաղ մարմնոյն ,

Արտաղ զանմեզս , յահ սարսանել ,  
և փորատել մահաթոյն :

Դու ըզխուժանն հար և ջրուեան ,  
՚ի չիք դարձցի դունդ գոցա ,

Եւ անյարիրք անկցին , ո՞վ հայր ,  
՚ի քո բազուկ գերակայ :

Նա և կրօնից կալցի վարժիչ , յետ  
խմ մահունն , Ազգ մարդկան ,

Զայս ինձ շնորհեա , և զայս Արդւոյս  
սիրոյն ձօնեա գրաւական :

Սապէս Արդին , և ձայն Ծնողին ան-  
դուստ կրկնեաց զայս Արդւոյն ,

.. Հօր զօրութիւն դու ո՞վ Արդի ,  
գու մեր Պատկեր գերարուն :

Նենդ և ոչ մի , բարձ գու զերկիւղ ,  
գեան հասուցեք քում Հօսին ,

Դաւ և ոչ մի , լոչ դաւադիր Եւ-  
խանն ուժէ խաւարին :

՚ի զուր ջանայ . թող ՚ի հազար դա  
փոփոխի կերպարան ,

Ե՛ս մօտ ըզգաւն և ըզփաղանդն  
ուժով վանեմ Աստուածեան :

Բայց մին միայն անձն հիքացեալ ,  
որ արդ մրաօք դանդաչէ

՚ի մեծ ոճիր մրտաքերեալ և հօ-  
վացաւ ՚ի սըրտէ :



Իս ցանդ սրբանի, ե՞ր քու՞մ ձայնին  
ըզնեա չոքաւ կենսաբեր,

Եւ խառնեցաւ 'ի քու՞մ հօսին,  
լիք զաշխարհին հեշա ըզսեր :

Ե՞ր և քոյին հաղորդ կրօնից եղև  
ամբաւ վըշարմբեր,

Որպէս ընդ իս, մինչ շև աշխարհ  
եղեալ, դու զայս գիտացեր :

Այլ խորհըրդով սրբոցն 'ի թիւ,  
գա բազմեցաւ յակըմբին,

Ձի և Գուշակք նախապատումք  
զայդ դիւարախոգ երգեցին :

Քոյոցդ յաւերժ լիցի կոթող գա  
'ի տխար սոսկալի,

Ըզգոյշք համբուն, և անպատիրք  
ուղի կալցեն զարբունի :

Այլք վասն քո խոտեալք զարև,  
դիմեալք 'ի մահ քաջութեան,

Սոց քեզ անթիւ ծընցեն արեամբ,  
մահու կենաց յալթական :

Չաւակք քանի՛, Երնունդ անճառ,  
կրօնից այսմիկ յարիցեն,

Քեզ և քանի՛ դունդք քաջամարտ  
հահատակաց խաղաացեն :

Միայն արի, և զըսկըսեալդ 'ի նը-  
պատակ տայ 'ի բուն,

Մի՛ դու ասեր, թէ՛ արդ քոյինքդ  
իցեն արբումդք անխօսուն :

Ա՛լ յամեացեն, բան տիրարուն դա-  
 ցա բղխեալ 'ի սրբանն,  
 Եւ պերճախօս Օրինագիրք, զաշ-  
 խարհս ողջոյն սրասացեն :  
 Եւ ըստ կարգէ կարգ սրբութեան  
 զաւակք նոցուն զաւակաց,  
 Զյաղժող նըշանդ յայնկոցս տար-  
 ցեն Ովկիանուն սահմանաց :  
 Ժիր քանի՛նն այդ ծով պատէ յար-  
 քայութեանց 'ի դասուց,  
 Անդ քում մեծի հարցեն անուան  
 հրաշակ 'ի դարս 'ի դարուց :  
 Քե՛զ ինքնակամ Արքայք անյաղժք  
 խոնարհեացեն դաւազան,  
 Քե՛զ առաժուր արկցեն ըզգէնս,  
 Սեղան ձօնեալ և խորան :  
 'Նա և ինքնինն այն գերարունն հը-  
 սում թագից յաղժական,  
 'ի ծոց ծաւալ շուրջ պարուրեալ  
 Ապեննածին Տիրերեայն,  
 Որ ազգ անթիւ սանձակոծէ, աշ-  
 խարհալուրն այն Արձան,  
 Քե՛զ Դրօշ և Խուրձ ընթագրեա-  
 ցէ և զԱշխարհին երասան :  
 Անդ կարգ կրօնից, նա և հարիւր  
 մեծ հոյակապ սուրբ Տաճար,  
 Քե՛զ և Սեղանք հարիւր ծրխեալք,  
 Քե՛զ Պաշտօնեալք և հաղար :

Եւ որ նոցան իսկ Աբբայից օրե-  
նադիր քահանայն ,

Յնոյժ մեծաշուք զիցէ ըզքեզ տար  
աշխարհացն 'ի սահման :

Իսկ թէ տակաւ շքընէլ գարուց ,  
ոգեկործան գացցէ գար ,

